



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

17.08.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/28

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Ալմաքսիմ» ՍՊԸ-ի 01.08.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից նյութերը, պարզեց հետևյալը.

1. «Ալմաքսիմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Ալմաքսիմ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 25.07.2017թ. ժ. 09:42-ին ներկայացրել էր բողոք, որի պահանջը չէր համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջներին:

Նույն օրը Խորհուրդը՝ հիմք ընդունելով Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, վերադարձրել էր «Ալմաքսիմ» ՍՊԸ-ի կողմից 24.07.2017թ. ներկայացրած բողոքը՝ արձանագրված անհամապատասխանություններն երկու աշխատանքային օրվա ընթացքում շտկելու և Խորհուրդ ներկայացնելու համար:

Ընկերությունը 01.08.2017թ. Խորհրդին է ներկայացրել բողոքի շտկված տարբերակը, որով հայտնել է հետևյալը.

«Լ.Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ն, որը գտնվում է ք. Երևան, Պ. Սևակի 5 հասցեում, հայտարարել է ՍԳԻ-ԳՀԱՊԶԲ-07/4 ծածկագրով գնանշման հարցման հրավեր, որով նախատեսված է ընտրված

մասնակցին առաջարկել կնքել բժշկական պարագաների մատակարարման պայմանագիր: Գնման առարկա հանդիսացող բժշկական պարագաները խմբավորված են 10 չափաբաժիններում, որոնցից սույն բողոքի շրջանակներում Ձեր ուշադրությունն ենք հրավիրում 2-րդ և 3-րդ չափաբաժինների վրա, որոնցով պատվիրատուն նախատեսել է գնել «Դեղապատ ստենտ Xience XPEDITION» և «Դեղապատ ստենտ Xience XPEDITION երկար»:

Մասնավորապես, ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-07/4 ծածկագրով հրավերում նշված չափաբաժիններով ապրանքների տեխնիկական բնութագրերը կազմված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշման դրույթների խախտմամբ, պարունակում են անհիմն պահանջներ՝ ստեղծելով անհավասար պայմաններ՝ ստեղծելով անհավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար»:

Որպես բողոքի փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ, բողոքաբերը նշել է հետևյալը.

«Պատվիրատուի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերը՝ մասնավորապես, տեխնիկական բնութագրով դրվել են այնպիսի պահանջներ, որոնք հանգեցնում են սույն հրավերի ընթացակարգում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, անհավասար պայմանների ստեղծմանն ու հնարավոր մասնակիցների սահմանափակմանը, ինչպես նաև չեն կարող լինել օբյեկտիվորեն հիմնավորված ՀՀ առողջապահական համակարգի համապատասխան ստանդարտների և ոլորտի իրավական այլ ակտերի շրջանակներում: Խոսքը վերաբերում է 2-րդ և 3-րդ չափաբաժիններով նշված ապրանքների տեխնիկական բնութագրերում պահանջվող ISO 13485, CE-MARK, FDA նշագրմանը, որը պատվիրատուի պահանջած նույն տեխնիկական բնութագրով ապրանքը ներկայացնելու անհիմն սահմանափակում է առաջացնում: Նշենք, որ վերոհիշյալ ապրանքի անվանումներն արդեն իսկ պարունակում են արտադրող ընկերությանը հղում, ուստի արտադրողի ֆիրմային անվանման համարժեքության հղումը անիմաստ է և վերոհիշյալ պարագայում առավել ևս հնարավորություն է ընձեռում հնարավոր մասնակիցների խտրականության դրսևորման»:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Կասեցնել «Լ.Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-17/4 ծածկագրով գնանշման

հարցման հրավերով նախատեսված գնման գործընթացը 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

2. Վերանայել այդ չափաբաժիններով նշված գնման առարկաների տեխնիկական բնութագրերը՝ վերացնելով ապրանքների տեխնիկական բնութագրերի հետ անմիջականորեն կապ չունեցող պահանջները:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Ալմաքսիմ» ՍՊԸ-ի տնօրեն Գայանե Շամիրյանը:

2. Լ.Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Լ.Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 09.08.2017թ. գրությամբ «Ալմաքսիմ» ՍՊԸ-ի կողմից 01.08.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Լ.Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով, ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-17/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը ՀՀ օրենսդրությանը չհամապատասխանելու վերաբերյալ.

2017թ. օգոստոսի 1-ին «Ալմաքսիմ» ՍՊԸ-ի կողմից Գնումների բոլորական խորհուրդ ներկայացվել է բողոք առ այն, որ Պատվիրատուի կարիքների համար անհրաժեշտ բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-17/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում «Գնումների» մասին ՀՀ օրենքի և 04.05.17 թ. կառավարության N526-Ն որոշման պահանջներին:

Պատվիրատուի կարիքների համար անհրաժեշտ բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով, ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-17/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման կողմից 12.07.2017 թ. կայացված գնման հայտում և պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտի հիման վրա՝ վերը նշված ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում

ամբողջությամբ և հստակ նկարագրված են ձեռքբերվող ապրանքի տեխնիկական պահանջները, չկա ոչ մի մատնանշում որևէ արտադրող երկրի, իսկ «ABBOTT Vascular» ապրանքային նշանի կողքին առկա է «կամ համարժեք» բառը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի, վերը նշված չափաբաժինների տեխնիկական պահանջների վերաբերյալ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն իրավունք ուներ օրենքով նախատեսված ժամկետներում պարզաբանում պահանջեր, ինչը մասնակցի կողմից չի արվել:

«Ալմաքսիմս» ՍՊԸ-ն իր 01.08.2017 թվականին բերված բողոքում նշել էր, որ վերը նշված ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար Պատվիրատուի կողմից տեխնիկական բնութագրում նշված ISO 13485, CE-MARK և FDA նշագրումները սահմանափակում են մրցակցության սկզբունքը:

Նշեն, որ ISO 13485, CE-MARK և FDA-ն հանդիսանում են միջազգային որակը հիմնավորող սերտիֆիկատներ, ինչը պարտադիր է վերը նշված չափաբաժինների համար, իսկ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N526-Ն որոշման՝ 21-րդ կետի 1-ին ենթակետի ապրանքի գնման դեպքում որակի սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է, եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար:

Այս պարագայում «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը ամբողջությամբ անհիմն է և հակասում է:

Ելնելով վերոգրյալից, խնդրում եմ մերժել «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի կողմից 01.08.2017 թ. բերված բողոքը ակնհայտ անհիմն լինելու պատճառով և թույլատրել վերսկսել գործընթացը ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-17/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի ներկայացուցիչներ Աշոտ Հովհաննիսյանը և Հռիփսիմե Նավասարդյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի 01.08.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը, բողոքի վերաբերյալ Պատվիրատուի 09.08.2017թ. գրությամբ ներկայացված դիրքորոշումը, «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման

գնահատող հանձնաժողովի 2017թ. հուլիսի 14-ի N 2 որոշմամբ հաստատված հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), Պատվիրատուի ներկայացուցչի դիրքորոշումը և կարծիքը.

«Լ.Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպել է ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-17/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

«Ալմաքսիմա» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերի Պայմանագրի նախագծի 1-ին Հավելվածը հանդիսացող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված՝ 2-րդ չափաբաժնի (Դեղապատ ստենտ Xience XPEDITION) և 3-րդ չափաբաժնի (Դեղապատ ստենտ Xience XPEDITION երկար) ապրանքների տեխնիկական բնութագրերը կազմված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշման դրույթների խախտմամբ, պարունակում են անհիմն պահանջներ՝ ստեղծելով անհավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար:

Մասնավորապես, Ընկերությունը հայտնել է, որ վերը նշված չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերում ISO 13485, CE-MARK և FDA նշագրումները խտրական են և հանգեցնում են մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

«ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերի համապատասխանաբար 2-րդ և 3-րդ չափաբաժիններով նախատեսված՝ «Դեղապատ ստենտ Xience XPEDITION» և «Դեղապատ ստենտ Xience XPEDITION երկար» գնման առարկայի տեխնիկական բնութագրերը պարունակում են նաև հետևյալ հատկանիշները՝ «ISO 13485, CE-MARK, FDA և ծագման սերտիֆիկատների առկայություն: ABBOTT Vascular կամ համարժեք»:

Բողոքի քննության նպատակով 09.08.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը ընդունեց այն փաստը, որ տեխնիկական բնութագրերում ներառված՝ ISO 13485, CE-MARK, FDA նշագրումները նախատեսում են արտադրող ընկերության կողմից իր արտադրած ապրանքին տրված համապատասխանության արտոնագրի պահանջը, ինչպես նաև այն, որ ISO 13485 սերտիֆիկատը հանդիսանում է «ABBOTT Vascular» արտադրող ընկերության անվանական արտոնագիրը, թեև պնդեց, որ Ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման կողմից նման տեխնիկական բնութագրերի սահմանումը

պայմանավորված է Պատվիրատուի կողմից նախկինում ձեռք բերված՝ նշված արտոնագրերը չունեցող ստենտերի ոչ բավարար որակական հատկանիշներով, և դրանից բխող՝ ներկայումս ձեռք բերվող ապրանքի որակի նկատմամբ հսկողության խստացման անհրաժեշտությամբ:

Խորհուրդն արձանագրում է, որ ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված՝ ISO 13485, CE-MARK և FDA արտոնագրերը հանդիսանում են բացառապես տվյալ արտադրողի՝ «ABBOTT Vascular» ընկերության կողմից արտադրված ապրանքին տրված անվանական արտոնագրեր:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Հրավերով նախատեսված՝ վերոնշյալ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում «կամ համարժեք» նշումը վերաբերում է տվյալ արտադրանքի անվանմանը («ABBOTT Vascular» կամ համարժեք), և չի վերաբերում մատնանշված արտոնագրերին:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի գրավոր դիրքորոշման մեջ նշված՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ ապրանքների գնման դեպքում որակի սերտիֆիկատի պարտադիր առկայության պայմանին, ապա Խորհուրդը գտնում է, որ նշված հղումը վերաբերում է պայմանագրի կատարման փուլում պայմանագիր կնքած անձի կողմից պատվիրատուին ներկայացվող որակի սերտիֆիկատի պարտադիր առկայության պահանջին, այլ ոչ թե գնման առարկայի տեխնիկական բնութագրով՝ կոնկրետ սերտիֆիկատ սահմանելու պահանջին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 13-րդ հոդվածի՝

- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

- 1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

- 2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը (...).

- 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց

դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Այսպիսով, խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերով նախատեսված գնման առարկայի 2-րդ և 3-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում սահմանելով կոնկրետ արտոնագրերի ներկայացման պահանջ, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 5-րդ մասով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի 01.08.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:
2. Պարտավորեցնել Հանձնաժողովին չեղյալ հայտարարել «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերով նախատեսված 2-րդ և 3-րդ չափաբաժինները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման

խորհրդի անդամ՝



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ